ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 88 -Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-029-0144-0072 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերոբ Պարոնյանի դիմումը, 15.05.2023թ. համայնքային սեփականությանը պատկանող հողային տարածքի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 16052023-06-0008 վկայականը կազմված 2023 թվականի մայիսի 16-ին,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 843-Ն որոշումը , ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ՝ ավագանին որոշում է՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղում գտնվող՝ Սերոբ Պարոնյանին վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրված հողամասը, ՀՀ կառավարության 09,06,2005թ թիվ 843-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես Գյուղատնտեսական արոտավայր 06-029-0144-0072 ծածկագրով, որը Գյուլագարակ համայնքի ավագանու 26.04.2024թ.-ի Լոռի-7 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին 38-Ա որոշմամբ փոխադրվել է բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի և մասնավորեցման ենթակա հողամաս է, ընդգրկված չէ ՀՀ Հողայի օրոնսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ուստի առաջնորդվելով վերը նշված օրենքներով բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության 06-029-0144-0072 ծածկագրի 0,22601 հա հողամասը 762000 /յոթ հարյուր վաթսուներկու հազար / ՀՀ դրամ, ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Սերոբ Պարոնյանին:

2.Սերոբ Պարոնյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու առուվաճառքի պայմանագիր:

3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		-	-	-
Օհանյան Ռուսլան		-	-	-
Սարգսյան Աիդա		-	-	-
Նալբանդյան Նարեկ		-	-	-
Մուրադյան Դավիթ		-	-	-
Պառավյան Գոհար		-	-	-
Այվազյան Սերյոժա		-	-	-
Գրիգորյան Արսեն		-	-	-
Այվազյան Վրույր		-	-	-
Գևորգյան Համլետ	-	-	-	բացակա
Քալաշյան Վարսենիկ	-	-	-	բացակա
Արոյան Տիգրան	-	-	-	բացակա
Տոնոյան Արտյոմ	-	-	-	բացակա
Գրիգորյան Թամարա	-	-	-	բացակա
Սարգսյան Ալիկ	-	-	-	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/